ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար <<Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի, <<Երևանի Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի, <<Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի և <<Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան թիվ 145 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/21 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 29.04.2022թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/21 գնման պայմանագրում 03.04.2024թ. կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 7-ի N 344-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/21 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5, 8.13 կետեր:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 9
29.04.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/21 գնման պայմանագրի

ք. Երևան 03.04 . 2024թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ԱՐԿԱԴԻԱ ՇԻՆ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս ընկերության տնօրեն Գ. Տիգրանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 7-ի N 344-Ն որոշումը և <<Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի, <<Երևանի Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի, <<Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի և <<Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան թիվ 145 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև 29.04.2022թ. կնքված N ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-21/21 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր)) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

1.1.1 Հաստատել Պայմանագրի 2024 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

1.1.2 Համաձայնագրով նախատեսված գումարի շրջանակներում աշխատանքներն իրականացնել Պայմանագրի N 2 հավելվածով հաստատված օրացուցային գրաֆիկին համապատասխան:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, իսկ Համաձայնագրի հավելվածը՝ 2 (երկու) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հանելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<ԱՐԿԱԴԻԱ ՇԻՆ>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Կենտրոն, Վ. Անտառային 136/1
կառավարական տուն 3	<<Բիբլոս Բանկ Արմենիա>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 2140006237250100
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 02847373
Հ/Հ 900011034411, 900011034478,	
900011039931, 900011039949	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Գ. Տիգրանյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված
29.04.2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/21 պայմանագրի
03.09.2024թ. կնքված N 9 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Մինչև 2023թ. վճարված գումարը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142/89	<<Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ	211 703 464	-	-	37 618 388	37 618 388	37 618 388	37 618 388	37 618 388	37 618 388	37 618 388	37 618 388	37 618 388	37 618 388	37 618 388
2	45221142/90	<<Երևանի Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ	257 284 718	-	-	40 907 509	40 907 509	40 907 509	40 907 509	40 907 509	40 907 509	40 907 509	40 907 509	40 907 509	40 907 509	40 907 509
3	45221142/91	<<Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ	138 189 724	-	-	45 091 753	45 091 753	45 091 753	45 091 753	45 091 753	45 091 753	45 091 753	45 091 753	45 091 753	45 091 753	45 091 753

4	45221142/92	<<Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան թիվ 145 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներ	99 645 408	-	-	32 822 131	32 822 131	32 822 131	32 822 131	32 822 131	32 822 131	32 822 131	32 822 131	32 822 131	32 822 131	32 822 131
Ընդամենը			706 823 314	-	-	156 439 781	156 439 781	156 439 781	156 439 781	156 439 781	156 439 781	156 439 781	156 439 781	156 439 781	156 439 781	156 439 781

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011034411, 900011034478,
900011039931, 900011039949
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<ԱՐԿԱԴԻԱ ՇԻՆ>> ՍՊԸ
ք. Երևան, Կենտրոն, Վ. Անտառային 136/1
<<Բիբլոս Բանկ Արմենիա>> ՓԲԸ
Հ/Հ 2140006237250100
ՀՎՀՀ 02847373

Տնօրեն՝

_____ Գ. Տիգրանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

01 ապրիլի 2024թ. Թիվ 055-349

Թիվ 22 55 40 42095/21 ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՊԱՅՄԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

(թիվ 22 55 40 42095/21 պայմանագրի ապահովման երաշխիքի հավելված)

Սույնով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն «ԱՐԿԱԴԻԱ ՇԻՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) դիմումի հիման վրա 27/10/2023թ.-ին հօգուտ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի տրամադրված թիվ 22 55 40 42095/21 բանկային երաշխիքի 5-րդ պարբերությունը շարադրում է հետևյալ կերպ.

- «5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 10 դեկտեմբերի 2025թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:»:

Թիվ 22 55 40 42095/21 բանկային երաշխիքի մյուս բոլոր պայմանները մնում են անփոփոխ:

«Սայաթ-Նովա» մասնաճյուղի կառավարիչ Հ. Պետրոսյան

Կատարող՝
Դավիթ Բարղության
Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 7091)

01 ապրիլի 2024թ.
ք. Երևան

Թիվ 055-350

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 22 55 40 42095/24

(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/21» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԱՐԿԱԴԻԱ ՇԻՆ» ՍՊԸ (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/21» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 46.931.935 (քառասունվեց միլիոն ինը հարյուր երեսունմեկ հազար ինը հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 10 դեկտեմբերի 2024թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/21» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա

ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Սայաթ-Նովա» մասնաճյուղի կառավարիչ Հ. Պետրոսյան

Կատարող՝
Դավիթ Բարդության
Հեռ. 010 31-88-88 (ներքին՝ 7091)